

Մուրատեան հաստատեալ է ի պաշտաման Առաջնորդութեան Հայոց Ասրագատականի,

Երջանկացեալ Որդեակ,

Հրաման տուք համայն հիմնարկութեանց Պետութեան, զի ամենայն պաշտօնեայք ծանկցեն զեղիշէ Ծ. վարդապետն Փոխանորդ Նորին Արքութեան և Առաջնորդ Ասրբագատականի. Եւ զինչ խնդիրք նորա իցեն և միջնորդութիւնք, յանձն առնել նմա վճռել համաձայն օրինայ իւրեանց, և լիցին նոքա ընդունելի ի Մէնջ, պարտադիր, և իբրև պարտականութիւն Զեր:



ԳԵՐԱՊԱՅԾԱՌ Հ. ԱՐՍԵԿՆ ԱՅՏՆԵԱՆ

† Յուլիսի 21-ին, գիշերը, յանկարծական մահուամբ կնքեց իւր մահկանացուն Վիեննայի Միիթարեան միաբանութեան արբահայր Գեր. Արսէն արքեպիսկոպոս Ա. յանեան: Ա. յապիտով մի տարուայ ընթացքում երկու Միիթարեան միաբանութիւններն եւս զրկուում են իրենց ամենապատկառ ելի ներկայացուցիչներից, իսկ Հայ գրականութիւնը Հ. Ալիշանի մահնեց յետոյ երկրորդ մեծ կորուսան է ունենում, զրկուելով աշխարհաբար հայերէնին քերականութիւն տուող մերժամանակի ամենանշանաւոր հայագիտից:

Գեր. Ա. յանեանը ծնուել էր 1825 թուի յունուար 7-ին Կ. Պոլսում: Սկզբնական կրթութիւնը նա ստացել է Կ. Պոլսի Միիթարեանց դպրոցում: Նորա ուսուցիչներից եղել է Հ. Զալիսեանը, իսկ աւագ ընկերներից Հ. Գաթրծեանը, որի հետ նա շատ է աշխատել ուկեդարեան գրաբարի վերայ:

Գիեննայի Միիթարեան ուխտի մեջ մտել է նա 1842 թուին: Այդ թուից ի վեր հանդուցեալը թէ զանազան

վարչական պաշտօններ է վարել նոյն վանքում և թէ զիտական աշխատութիւններ ի լսոյ հանել, որոնց մէջ նշանաւորագոյնն է նորա կազմած քննական քերականութիւնը։ 1886 թ.ին նա ընտրուել է ընդհանրական արբայ նոյն միաբանութեան, որից յեաս՝ զբաղուած լինելով վարչական գործերով, գիտական նշանակութիւն ունեցող կարեօր երկեր չետուել։

Այսպէս որ Հ. Արտէն Ա. յանեանի անուան պատիւ բերագ գլխաւոր գործը կը մնայ միշեալ Քննական Գերականութիւնը։ Այդ գիրը երկարատև և բարեխիղձ ջանքերի և մանրակրկիտ ուսումնասիրութեան արդիւնք է, որ լուսեատ այն ժամանակ, երբ ամէնից աւելի անհրաժեշտ էր վերջ տալու աշխարհաբարեան և գրաբարեան կուսակցութիւնների միմեանց գէմ մղած սպայքարին։ Դրաբարեանները աշխարհիկ լեզուի գոյութեան իրաւունքը գրականութեան մէջ մերժում էին։ Հ. Ա. յանեանը որ քաջ գիտէր գրաբարը ուսումնասիրեց նաև աշխարհիկ լեզուի հիմունքը և այն եզրակացութեան եկաւ, թէ պէտք է աշխարհաբարը գրական լեզու գարձնել՝ զաելով ու ճոխացնելով գրաբարի խոր ուսումնասիրութեամբ։ Այդ եզրակացութիւնը այնքան ճիշտ և դիտնականօրէն ապացուցած էր, որ գորանով վճիռը դրած համարուեցաւ և պայքարը վերջացած։ Ահա այդ գործն էր, որ Հ. Ա. յանեանի անունը հոչակեց և որ դեռ երկար ժամանակ իր նշանակութիւնը կունենայ, վկայելով հեղինակի լեզուագիտական հմտութեան և պայծառ ըմբռնողութեան մասին։

Գեր. Ա. յանեանի համար ոչ պակաս պատուաբեր է նորա 14 տարուայ երկարատև արբահայրութիւնը։ բաւական է յիշել միայն, որ նորա օրով սկսեց հրատարակուել հայութի մէջ միակ բանասիրական լուրջ թերթը՝ Վիեննայի Ֆիլիպարեանց «Հանդէս Ամսօրեան»։ Նորա օրով էր, որ Վիեննայի միաբանութիւնը բարձր գիրք ձեռք բերեց հայ և օստադգի բանասէրների աշքում և գերազանցեց, կարելի է ասել, Վիեննեաթիկի իւր քոյր միաբանութիւնից։ Երբ այդ միաբանութեան մէջ երեացին Տաշեանի, Գալէմքարեանի և Մենե-

վիշեանի նման գիտնական երիտասարդ անդամներ։ Այս
խնդրում Արբահայր Այտնեանի արժանիքն այն է եղել, որ
գիտցել է միարանութեան գիտնական անդամներին առաջ
քաշելու քաջալերել և միջոց տալ, որ նորա կարողանան իրենց
քանիքարը շահեցնել յօդուտ հայագիտութեան։

Գեր. Այտնեանը ունեցել է նաև նկարչութեան և ե-
րաժշտութեան շնորհք, բայց այդ հարկաւ երկրորդական
տեղ է բռնում։ Առանձնապէս գնահատութեան արժանի է
այստեղ նորա այն ձգտումը, որով ձգտել է հայ—եկեղեցական
երգեցողութիւնը զաելու օտարամուա տարրերից և կահոնա-
ւորելու։

Իբրև անձնաւորութիւն Հ. Այտնեանը եղել է ազնուա-
սիրու, լուրջ և պատկառելի, ինչպէս վկայում են նորա հետ
անձնական ծանօթութիւն ունեցողները։ Թէ որպիսի յարդ
էր վայելում նա օտարների, յատկապէս Վիեննայի Բարձր
կարգի հասարակութեան առաջ՝ վկայում են նորա մահուան
առթիւ Աւստրիոյ Կայսրից ստացուած ցաւակցական հեռա-
գիրն ու Վիեննայի քաղաքագլխի նամակը։ Խօթանաւուն և
ութամեայ ալեգարդ Աւստրմականը վաղուց էր իջել, ինչպէս
միշուեցաւ, զրական ասպարիզից, բայց Վիեննայի Միարանու-
թեան կորուստը յանձին նորա անփոխարինելի է։

Նոր արբահայր ընտրուած է Հ. Թոռնեան։

